ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Աշոտ Սերոբի Սաղյանը ծնվել է 1957 թ. ապրիլի 7-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Չափար գյուղում: 1978 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1980–1984 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Ա. Նեսմեյանովի անվան էլեմենտօրգանական միացությունների ինստիտուտի նպատակային ասպիրանտուրայում:

Ա. Սաղյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1985 թ., դոկտորականը՝ 1997 թ.: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 2016 թ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: Նրա գիտական գործունեության բնագավառներն են ստերեոսելեկտիվ կատալիզը, ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզը, բնական և կենսասինթետիկ խառնուրդներից կենսաակտիվ միացությունների անջատումը և մաքրումը: Հեղինակ է շուրջ 350 գիտական հոդվածի, 2 դասագրքի, 2 մենագրության: Ա. Սաղյանը 18 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար և խորհրդատու է:

Ա. Սաղյանն աշխատել է ԽՍՀՄ Բժշկական և մանրէաբանական արդյունաբերության նախարարության Գենետիկայի և սելեկցիայի համամիութենական ինստիտուտի Չարենցավանի մասնաճյուղում, այնուհետև՝ Ամինաթթուների գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտում, որը ԽՍՀՄ փլուզումից հետո վերանվանվել է «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմում: 2000 թ. նշանակվել է ինստիտուտի տնօրեն: 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն: Ա. Սաղյանը 1998 թ. աշխատում է նաև Երևանի պետական համալսարանում՝ որպես դեղագործական քիմիայի ամբիոնի դոցենտ, ապա՝ պրոֆեսոր, իսկ 2003 թ.՝ ամբիոնի վարիչ: 2016 թ. նշանակվել է դեղագործական քիմիայի ամբիոնի հենքի վրա ստեղծված՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն:

2021 թ. հունիսի 28-ին Ա. Սաղյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ նախագահ:

Ա. Սաղյանը ՀՀ ԳԱԱ «Հայաստանի քիմիական հանդես»-ի գլխավոր խմբագիրն է (2008-ից), ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչը ՄԳՏԿ-ի համակարգող խորհրդում:

Ա. Սաղյանն արժանացել է Եվրամիության «Դեկարտի» անվան մրցանակի (2001), պարգևատրվել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարական «Բարեկամություն» շքանշանով (2002) և ՀՀ վարչապետի հուշամեդալով (2009):

Ա. Սաղյանը ՀՀ պետական մրցանակի դափնեկիր է (2015), ՀՀ նախագահի մրցանակի կրկնակի դափնեկիր (2004, 2011): 2014 թ. նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: